Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
հոկտեմբերի 20-ի N 1621 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԿԱՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ (ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ)

1. Սույն կարգով կարգավորվում են մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով կամ վիճակագրական տարածքով փոխադրվող ապրանքների մասին տվյալների հավաքման, մշակման և տարածման (հրապարակման) հետ կապված հարաբերությունները:

2. Մաքսային մարմինների կողմից մաքսային վիճակագրության վարման համար օգտագործվում են մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները, որոնք ձևավորվում են Եվրասիական տնտեսական միության իրավունքի մասը կազմող միջազգային պայմանագրերի և մաքսային կարգավորման ոլորտի ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային կարգավորման ոլորտի օրենսդրությամբ սահմանված՝ մաքսային գործառնությունների կատարման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա և ունեն սահմանափակ հասանելիություն:

3. Մաքսային մարմինների կողմից մշակված տվյալների հիման վրա վարվում է Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մաքսային վիճակագրությունը՝ ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով:

4. Մաքսային վիճակագրության ցուցանիշների հավաստիությունն ապահովելու նպատակով մաքսային մարմինների կողմից կատարվում է տվյալների ճշգրտում:

5. Մաքսային մարմնի՝ մաքսային վիճակագրության վարման համար պատասխանատու ստորաբաժանումը մաքսային վիճակագրությանն առնչվող՝ հրապարակային տեղեկատվությունը տեղադրում է Հայաստանի Հանրապետության

պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում, որը ներառում է մաքսային վիճակագրության վարման համառոտ մեթոդաբանությունը:

6. Սույն կարգի 5-րդ կետին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից ամսական ճշգրտված ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո տասնհինգ օրվա ընթացքում, եռամսյակային ճշգրտված ցուցանիշները՝ երկու ամսվա ընթացքում, իսկ տարեկան ճշգրտված ցուցանիշները՝ մինչև հաջորդ կիսամյակի ավարտը:

7. Սույն կարգով մշակված վիճակագրական փաստաթղթերը և տեղեկությունները այլ պետական մարմիններին տրամադրվում են Եվրասիական տնտեսական միության իրավունքի մասը կազմող՝ միջազգային պայմանագրերի և մաքսային կարգավորման ոլորտի ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային կարգավորման ոլորտի օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մաքսային վիճակագրության ամսական, եռամսյակային և տարեկան տեղեկատվության ձևը սահմանում է մաքսային մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ